Արբիտրաժի
և հաշտարարության
հայաստանյան կենտրոն

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԳՈՐԾ №

ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ, ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անուն՝

Ազգանուն՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի արբիտրաժային կանոնների 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախքան նշանակումը կամ հաստատումը, ապագա արբիտրը պետք է ստորագրի ընդունման, հասանելիության, անկողմնակալության և անկախության մասին հայտարարություն:
- Յուրաքանչյուր արբիտր պետք է արբիտրաժային վարույթում ներգրավված անձանցից լինի և մնա անկախ և անաչառ (Կանոններ, հոդված 12, մաս 1):
- Սույն հայտարարությունը պետք է ներառի ցանկացած փաստ, հանգամանք կամ հարաբերություններ՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի, որոնք կարող են կասկածի տակ դնել արբիտրի անաչառությունն ու անկախությունը: Նմանօրինակ հանգամանքների առկայության դեպքում արբիտրը պետք է բացահայտի նաև դրանց տևողությունը՝ նշելով սկզբի և ավարտի ամսաթվերը: Հայտարարությունը լրացնելիս արբիտրը պետք է հաշվի առնի նաև անձանց և կազմակերպությունների հետ հնարավոր մասնագիտական առնչությունները:
- Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի բացարկ հայտնել արբիտրին՝ վերջինիս ենթադրյալ անկողմնակալության կամ անկախության հանգամանքով պայմանավորված:

☐ **Ես ուշադրությամբ ուսումնասիրել եմ տրամադրված տեղեկատվությունը և սույնով հայտնում եմ իմ համաձայնությունը վերոնշյալ դրույթների և պայման-ների հետ:**

ԸՆԴՈՒՆՈՒՄ

Խնդրում ենք նշել բոլոր համապատասխան վանդակները:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային կանոնների (այսուհետ՝ **«Արբիտրաժային կանոններ»**) հիման վրա

☐ **ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ**
նշանակվել արբիտր

☐ **ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՄ**
նշանակվել արբիտր:
(չընդունման պատճառները կարող եք բացահայտել ստորև)

Սույնով համաձայնում եմ հանդես գալ որպես արբիտր Արբիտրաժային կանոնների համաձայն և համապատասխան:

Իմ ընդունումը հաստատելով՝

(i) հաստատում եմ, որ ծանոթ եմ Արբիտրաժային կանոններին և պարտավորվում եմ պահպանել դրանք սույն արբիտրաժային գործով վարույթի ողջ ընթացքում:

(ii) ընդունում եմ և տեղեկացված եմ, որ իմ՝ որպես արբիտրի ծառայությունների վճարները սահմանվում են բացառապես Կենտրոնի կողմից՝ համաձայն Արբիտրաժային կանոնների հավելված 1-ի 4-րդ հոդվածի: Բացի այդ, իմ՝ որպես արբիտրի պարտականությունների կատարման հետ կապված ցանկացած ծախս ենթակա է փոխհատուցման, ինչպես նշված է Կենտրոնի Արբիտրաժի կանոնների համապատասխան դրույթներում:

(iii) ընդունում եմ, որ իմ անունը, ազգանունը, դերը, իմ՝ որպես արբիտրի ընտրության եղանակը, ինչպես նաև գործին առնչվող այլ տեղեկություններ կարող են հրապարակվել Կենտրոնի պաշտոնական հարթակներում, եթե կողմերը ձեռք բերեն այդօրինակ համաձայնություն:

ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

☐ Սույնով հաստատում եմ, հիմնվելով ներկայումս ինձ հասանելի տեղեկատվության վրա, որ կարող եմ տրամադրել անհրաժեշտ ժամանակ՝ սույն գործով արբիտրաժն իր ողջ տևողության ընթացքում ջանասիրաբար, արդյունավետ և արագ անցկացնելու համար՝ համաձայն Արբիտրաժային կանոններով սահմանված ժամկետների:

Իմ ընթացիկ մասնագիտական ներգրավվածությունները ներկայացված են ստորև՝ ի գիտություն Կենտրոնի, Կենտրոնի Արբիտրաժային խորհրդի և կողմերի:

ԱՐԲԻՏՐԱԺԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ՝

☐ որպես նախագահող արբիտր/միանձնյա արբիտր

☐ որպես համաարբիտր

☐ որպես կողմի ներկայացուցիչ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ՝

որպես կողմի
ներկայացուցիչ

N	Լրացուցիչ մեկնաբանությունների դաշտ

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Խնդրում ենք նկատի ունենալ Արբիտրաժային կանոնների 12-րդ հոդվածի 3-րդ մասը, որով Դուք պարտավորվում եք բացահայտել անցյալ կամ ներկա ցանկացած հարաբերություն՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի, այդ թվում՝ ֆինանսական, մասնագիտական կամ որևէ այլ բնույթի, որոնք գոյություն են ունեցել Ձեր և ներգրավված կողմերից որևէ մեկի, նրանց օրինական ներկայացուցիչների կամ փոխկապակցված անձանց միջև: Եթե առկա է նշված հանգամանքները բացահայտելու հետ կապված անորոշություն, ապա նման հանգամանքները ևս պետք է բացահայտվեն:

Ձեր բացահայտումը պետք է լինի համապարփակ և կոնկրետ՝ ներառելով համապատասխան մանրամասներ, ինչպիսիք են՝ մեկնարկի և ավարտի ամսաթվերը, ֆինանսական պայմանավորվածությունները, կազմակերպութ-յունների, անհատների տվյալները և բոլոր այլ համապատասխան տեղեկությունները:

☐ **ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓԱՍՏԵՐ/ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ԱՌԿԱ ՉԵՆ**

Ես հաստատում եմ իմ անաչառությունն ու անկախությունը՝ պարտավորվելով պահպանել այն սույն արբիտրաժային վարույթի ողջ ընթացքում: Ես հաստատում եմ, որ չկա անցյալում գոյություն ունեցած կամ ներկայումս գոյություն ունեցող որևէ փաստ կամ հանգամանք, որը կարող է կասկածի տակ դնել իմ անկախությունը ներգրավված ցանկացած կողմի աչքերում, ինչպես նաև որևէ հանգամանք, որը կարող է հիմնավոր կասկածներ առաջացնել իմ անաչառության վերաբերյալ:

☐ **ԸՆԴՈՒՆՈՒՄ՝ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՎ ՆՇՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ/ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

Ես հաստատում եմ իմ անաչառությունն ու անկախությունը՝ պարտավորվելով պահպանել այն սույն արբիտրաժային վարույթի ողջ ընթացքում: Ընդունելով իմ պարտականությունը՝ բացահայտելու ցանկացած փաստ կամ հանգամանք, որը կարող է հիմնավոր կասկածներ առաջացնել իմ անաչառության և անկախության վերաբերյալ, ուշադրության եմ հրավիրում հետևյալին.

N	Բացահայտման ենթակա փաստերի ծավալը (եթե այդպիսիք առկա են) նշել ստորև

Երևան, Հայաստան

Ամսաթիվ՝ DD.MM.YY

Ստորագրություն՝

* Փաստաթուղթը ստորագրելու համար օգտագործեք հետևյալ տարբերակներից մեկը.

1) Պատճենեք Ձեր ստորագրությունը Word փաստաթղթից և տեղադրեք այն այս ձևով:
2) Ստորագրե՛ք Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի (ԷԿԵՆԳ) miD, eID, JSignPDF ծրագրային գործիքների միջոցով:
3) Արտածեք Ձեր ստորագրությունը (սեղմեք այստեղ հետագա օգնության համար):
4) Տպեք ձևաթուղթը, ստորագրեք այն և սկանավորեք:

ԿԵՆՏՐՈՆԻ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հոդված 12. Ընդհանուր դրույթներ

1. Յուրաքանչյուր արբիտր պետք է արբիտրաժային վարույթում ներգրավված անձանցից լինի և մնա անկախ և անաչառ:

2. Արբիտրները և ապագա արբիտրները չպետք է գործի հետ կապված *ex parte* շփումներ ունենան կողմերի կամ նրանց ներկայացուցիչների հետ՝ բացառությամբ, երբ նախքան առաջադրումը, անհրաժեշտ է քննարկել գործի ընդհանուր բնութագիրը և ապագա արբիտրի որակավորումը, փորձառությունը կամ մասնագիտացումը, ինչպես նաև ապագա արբիտրի անաչառությունը, անկախությունը և հասանելիությունը: Բացի այդ, արբիտրները կարող են *ex parte* շփվել կողմերի կամ կողմերի ներկայացուցիչների հետ արբիտրաժային տրիբունալի նախագահի ընտրության նպատակով: Բոլոր *ex parte* շփումներում արբիտրը կամ ապագա արբիտրը պետք է ձեռնպահ մնա վեճի էության վերաբերյալ որևէ դիրքորոշում հայտնելուց:

3. Նախքան նշանակումը կամ հաստատումը, ապագա արբիտրը պետք է ստորագրի ընդունման, հասանելիության, անկողմնակալության և անկախության մասին հայտարարություն: Հավանական արբիտրը պետք է Քարտուղարությանը գրավոր կերպով հայտնի այն բոլոր փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կողմերի տեսանկյունից կարող են կասկածի տակ դնել արբիտրի անկախությունը, ինչպես նաև ցանկացած հանգամանքի մասին, որը ողջամիտ կասկած կարող է առաջացնել արբիտրի անկողմնակալության վերաբերյալ: Քարտուղարությունը հայտարարությունը և ստացված ցանկացած տեղեկատվություն տրամադրում է կողմերին և սահմանում է ժամկետ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու համար: